ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2025 թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Խուդաթյան

Ի պատասխան Ձեր՝ 12.03.2025թ. թիվ ԴԽ/15.3/8230-2025 հանձնարարականի, հայտնում եմ, որ ըստ Վանաձորի համայնքապետարանի կողմից տրված պարզաբանման (կցվում է), նշված բնակելի շենքի բոլոր բնակիչներին տրվել են փոխհատուցումներ:

Առդիր՝ էլեկտրոնային ֆայլ:

X _____

Հարգանքով՝ Ա.Ղազարյան

կատ. Լ.Հախինյան
հեռ. /0322/ 2-03-91

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

h.1437124
10-03-2025թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն*

Դիմող՝ *ՄԱՐԻ ՄՈՎՍԵՍՅԱՆ*
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Հասցե՝ *ԼՈՌԻ, 2016, ՎԱՆԱՁՈՐ,*
ԱՄԻՐՅԱՆ Փ., 7, 32
marimovsesyan97@gmail.com : 37477882107

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Հարգելի՛ **Դավիթ Խուդաթյան**,

Ես՝ **Մարի Մովսեսյանս**, դիմում եմ Ձեզ՝ հետաքրքրվելու համար իմ մոր՝ **Անուշ Մովսեսի Մովսեսյանի** (**AT04983311**) բնակարանային խնդրի կարգավորման ընթացքի մասին։

Մայրս 1988թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքով կորցրել է իր բնակարանը, որը գտնվում էր Վանաձորում (**Շիրակի խճուղի 40/401 հասցեում**)։ Տասնամյակներ շարունակ նա դիմել է տարբեր ատյաններ՝ իր հասանելիք բնակարանի տրամադրման հարցով, սակայն մինչ օրս խնդիրը լուծում չի ստացել։

Դատարանի որոշմամբ հաստատվել է, որ մայրս ընդգրկված է բնակարանների բաշխման հերթացուցակում, սակայն այսքան տարի մենք շարունակում ենք մնալ առանց բնակարանի։ 1989-2003 թթ. բնակվել ենք Ստեփանավանում՝ տնակում, ապա տեղափոխվել Վանաձոր, որտեղ ստիպված ենք եղել վարձով ապրել։ Ներկայումս բնակվում ենք մորաքրոջս տանը, սակայն վերջինս ֆինանսական խնդիրների պատճառով ստիպված է վաճառել բնակարանը, ինչի հետևանքով մենք կրկին կանգնում ենք անօթևան մնալու վտանգի առաջ։

Մայրս թոշակառու է, ես՝ ուսանող, այս պահին առողջական խնդրի պատճառով անաշխատունակ եմ, և մեզ համար նոր բնակարանի վարձակալությունը մեծ դժվարություն է ներկայացնում։

Բացի այդ, մեզ հայտնի է, որ նշված հասցեով (**Շիրակի խճուղի 40/401**) տարիների ընթացքում այլ անձանց են գրանցել, և մեր տեղեկություններով՝ նրանք արդեն ստացել են բնակարան, մինչդեռ մայրս շարունակում է սպասել։

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն մեր հերթացուցակում գտնվելու վերաբերյալ, ինչպես նաև պարզաբանում, թե ինչ փուլում է մեր խնդրի լուծման գործընթացը և ինչ լրացուցիչ քայլեր կարող են ձեռնարկվել այս հարցը վերջնականապես լուծելու համար։

Անհրաժեշտության դեպքում պատրաստ եմ տրամադրել հավելյալ տեղեկատվություն կամ կոնկրետ փաստաթղթեր՝ հարցի ուսումնասիրությունը առավել արդյունավետ կազմակերպելու համար։

Կանխավ շնորհակալ եմ ուշադրության և արձագանքի համար։

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար։

Դիմող՝

ՄԱՐԻ ՄՈՎՍԵՍՅԱՆ